ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւնները Անգլիայում և Գլադստոնի մինիստրութեան կազմը։—Սահմանադրութեան վերափոխումը Բելգիայում. թագաւորական ռեֆերենդումը։—Բրիւսելի Հակա-գերեվաճառական և հակա-տարկական գլխաւոր ակտը։—Բիսմարկի ճառը Ենայում։—Պապ Լէօ XIII և եւրոպական դաշնակցութիւնները։—Ստամբուլով Պոլսում։

Պարլամենտական ընտրութիւնները Անգլիայում, որ կատարուեցին յուլիս ամսում, վերջացան, որպէս սպասելի էր և ցանկալի՝ յօգուտ Գլադստոնեան ազատամիտ կուսակցութեան։ Գլադստոնի կարդացած յորդորը իւր ընտրողական վիճակում՝ Միդլոթիան'ում (Շոտլանդիա) իւր ամենաէական կէտերում մենք հաղորդեցինք ընթերցողներին մեր անցեալ տեսութեան մէջ։ Այդ ընտրողական մանիֆէստից պարզ երևաց, որ անգլիական ազատամիտ կուսակցութեան պարագլուխը ցանկանում էր, որ ընտրողները իրանց ձայները յօգուտ ազատամիտներին կամ պահպանողականներին տալուս՝ ղեկավարուէին ամենից առաջ նրանով՝ ցանկանում են նոքա Իրլանդիային ինքնավարութիւն (հոմ-ռուլ) տալ թէ ոչ։ Այսպիսով հոմ-ռուլի խնդիրը Գլադստոնը առաջին գծի վերայ էր դրել. մինչդեռ պահպանողականները աշխատեցին ընտրողների համակրութիւնը իրանց կողմը դրաւել՝ ընդդիմանալով իրլանդական հոմ-ռուլին և խոստանալով զբաղուել այլ ներքին խնդիրներով և մասնաւորապէս խնդիրներով վերաբերեալ բանուոր դասակարգին։ Մասնաւորապէս բանուոր դասակարգի պաշտպանութեան վերայ պահպանողականները յոյսեր էին դրել այն հիման վերայ, որ Գլադստոնը, ընդունելով բանուորների կորպորացիաների ներկայացուցիչներին, յայտնել էր նրանց որ խոստումներ չի կարող տալ բանուորներին և

որ այն մի քանի տարիները որ իրան վիճակած կը լինի անցկացնել այս աշխարհում (Գլադստոնը 83 տարեկան է), նա մտադիր է իրլանդական խնդրի լուծմանը նուիրել։ Եւ, չը նայած դորան, ընտրութիւններից յետոյ երևաց, որ բանտորները իբրև մի մարդ իրանց ձայները տուել էին Գլադստոնի կուսակից պատգամաւորական թեկնածուներին, որոնց մէջ, ընտրածներից կան ի հարկէ թէև թուով քիչ (9 հոգի) զուտ բանտորական պատգամաւորներ։

Անգլիական պարլամենտի անդամների թիւն է 669. դոցանից 355 հոգի ընտրած են յօգուտ Գլադստոնի հոմ-ռուլական ծրագրի, 314-ը ընտրած են հոմ-ռուլի հակառակորդներից։ Յօգուտ հոմ-ռուլի են բոլոր զուտ գլադստոնեան ազատամիտները, որոնց անպայման պարագլուխն է Գլադստոնը, ապա արմատական կուսակցութիւնը, որի պարագլուխն է Լաբուշէրը, ապա 9 հոգի բանտորական ներկայացուցիչներ և 79 հոգի իրլանդական պատգամաւորներ։ Իրլանդիան ընդամենը ունի 103 ներկայացուցիչ անգլիական պարլամենտում, բայց այդ երկրի ազգաբնակութիւնը միայն $^3/_4$-ով իրլանդացի է, իսկ մնա $^1/_4$-ը—անգլիացի կամ շոտլանդացի լինելով — հակա-իրլանդական զգացումներ ունէր և նորա մի մեծ մասը շարունակում է դեռ ունենալ. այդ ոչ իրլանդական ազգաբնակութիւնը ներկայ պարլամենտի համար հետևապէս ընտրել է 24 պատգամաւորներ, որոնք հոմ-ռուլի ընդդէմ են։

Հոմ-ռուլի ընդդէմ ընտրած են 314 հոգի, որոնք բաղկացած են երկու տարրերից. բուն պահպանողականներից, որոնց պարագլուխն է լորդ Սոլսբրի, և ազատամիտ-ունիոնիստներից, որոնց պարագլուխն է լորդ Հարդինգտոն։ Այս վերջինները, ինչպէս աւելի ընդարձակօրէն ընթերցողները պատմած կը գտնեն սոյն համարում տպւոդ մի այլ յօդուածում, [1]) մինչ 1886 թուականը կազմում էին Գլադստոնի կուսակցութեանը, բայց բաժանուեցին սորանից 1886-ին Գլադստոնից յայտարարած իրլանդական հոմ-ռուլի պատճառով, կազմելով մի առանձին ազատամիտ կուսակցութիւն որը միացած է պահպանողականների հետ միմիայն Իրլանդական խնդրում։ Բայց հէնց դորա պատճառով Հարդինգտոնի ունիոնիստ-

---

[1]) Գաղափարի մի յաղթանակ Անգլիայում։

աղատամիտ կուսակցութիւնը, պաշտպանում էր պահպանողական մինիստրութիւնը։

Նոր տոմարով Օգոստոսի 12 (հին տոմարով 31 յուլիսի) նոր պարլամենտը արդէն յայտնեց իւր անվստահութիւնը Սոլսբրիի մինիստրութեան, որով վերջինս այդպիսով հարկադրուեց հրաժարական տալու։

Այդ առիթով պէտք է նկատել, որ Անգլիայում վերջին քառորդ դարում դրեթէ հաստատուած սովորութեան համաձայն, մի մինիստրութիւն որ ընդհանուր ընտրութիւններին պարտութիւն է կրում, հրաժարական է տալիս, այլ եւ չսպասելով պարլամենտի բացմանը, չսպասելով որ պարլամենտը իւր անվստահութիւնը յայտնի։ Այդպէս վարուեց 1868-ին Դիզրաէլին (որ յետոյ լորդ օֆ Բիկոնսֆիլդ), այդ օրինակին հետեւեց Գլադստոնը 1874-ին, և այսպէս շարունակ նաև 1886-ին, երբ Գլադստոնը պարտութիւն կրելով իսկոյն իւր հրաժարականը տուեց։ Բայց Սոլսբրին, երևի հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ Գլադստոնեան մեծամասնութիւնը միայն շուրջ 40 հոգի է, և թերևս ցանկանալով այդ մեծամասնութեանը առիթ տալ արտայայտուելու, իսկոյն չհեռացաւ պաշտօնից, այլ սպասեց պարլամենտական առաջին քուէին։

Խնդիրը այժմ այն է թէ պիտի կարողանայ արդեօք Գլադստոնը իրլանդական հոմ-ռուլի մասին օրէնքը անցկացնել պարլամենտում թէ ոչ։ Որ պատգամաւորների ժողովում դորա համար մեծամասնութիւն կայ, այդ արդէն անկասկած է. բայց պարլամենտը բաղկացած է ոչ միայն պատգամաւորների ժողովից (Անգլիայում նա կոչւում է Համայնքների ժողով Chambre of commons), այլ և լորդերի ժողովից։ Հաստատ է որ լորդերի ժողովում համայնքների ժողովից ընդունուած իրլանդական հոմ-ռուլի բիլլի համար մեծամասնութիւն չկայ, իսկ առանց լորդերի ժողովից ընդունելու՝ բիլլը չի կարող ներկայացնուել թագուհու ստորագրութեանը. հետևապէս նա օրէնքի զօրութիւն չի կարող ունենալ։ Շատ կարելի է ուրեմն որ այս տարի Գլադստոնի մինիստրութեանը չի յաջողուի իրլանդական հոմ-ռուլի բիլլը իրագործել։ Համաձայն Գլադստոնի յայտարարութեան՝ եթէ այդպէս պատահի, նա գալ տարի նորից կը ներկայացնի իւր օրինագիծը։ Եթէ նաև գալ տարի

չը յաջողի, անկասկած է որ կ'սկսի մի կռիւ համայնքների ժողովի և լորդերի պալատի մէջ, որ սակայն ծայրահեղութեան հասցնել չի վճռիլ լորդերի պալատը, քանի որ այժմեանից հոմռուլի խնդիրը, մեր կարծիքով, վաստակած խնդիր պէտք է համարել, և նոյն իսկ վոանգի մէջ կը դնի իւր քաղաքական գոյութիւնը, եթէ լորդերի պալատը շարունակ ընդդիմադրութիւն անելու լինի մի այդպիսի բէֆորմին։

Ընտրողական մանրամասնութիւններից մենք առաջ կը բերենք մի քանի կարևոր կամ հետաքրքրական կէտեր։

Գլադստոնը ինքը ընտրուել է Շոտլանդիայի Միդլոթիան վիճակում։ Իւր պարլամենտական երկար կեանքի ընթացքում նա իւր ընտրողական վիճակները փոփոխել է մի քանի անգամ։ ամենից սկզբում նա ընտրուում էր Օքսֆորդում, ապա Լանկաշիրում, յետոյ Լոնդոնի արուարձան Գրինուիչ'ում, իսկ 1880-ից դէս Շոտլանդիայի Միդլոթիան վիճակում։ Այդ վիճակում ձայն տալու համար նշանակուած են 14 տեղեր, որոնցից երկուսը գտանուում են Էդինբուրգ քաղաքում (բայց ինքը Էդինբուրգը չի պատկանում այդ վիճակին)։

1880-ին Գլադստոնը ստացել էր 1579 ձայն, իւր հակառակորդ էարլ օֆ Դելկէյթը՝ 1368 ձայն։

1885-ին (ընտրողական բէֆորմից յետոյ, որով ձայնատուների թիւը աւելացաւ) Գլադստոնը ստացաւ 7889 ձայն, հակառակորդը, սըր Զարլս Դալռիպլը՝ 3248 ձայն։

1886-ին Գլադստոնը իւր վիճակում հակառակորդ չունեցաւ։

Ազատամիտ կուսակցութեան պատկանողներից և ընտրուածներից է այս անգամ նաև սըր Զարլս Դիլկը, որ վերջին տարիներս հեռացած էր քաղաքական ասպարիզից, կարծեմ անձնական պատճառներով։ Այսպիսով Դիլկը, այս ամենահարուստ ընդունակութիւններով օժտուած մարդը, նորից վերադարձուեց հասարակական կեանքին և ազատամիտ կուսակցութեանը։

Իրլանդական պատգամաւորները, որպէս յայտնի է, հանդուցեալ Պարնելի կուսի պատճառով Գլադստոնի հետ, որի հետևանքները տևում են մինչ այսօր, բաժանուած են պարնէլականների և հակապարնէլականների, որոնք սակայն բոլորն էլ իրլանդական քաղաքական ծրագրի նկատմամբ մի են։ Արդ այդ հակա-պարնէլա-

կանների մէջ, որոնք թուով շատ աւելի են պարնէլականներից, ընտրուած է այս անգամ մի նշանաւոր մարդ, Էդուարդ Բլէկ, որ դորանով առաջին անգամ մտնում է անգլիական քաղաքական ասպարէզը։ Բլէկը կանադացի է, երկար տարիներ նա պարագլուխ էր ազատամիտ կուսակցութեան Կանադայում, ուր նա 31 տարեկան հասակում, թագաւորական խորհրդատուի կոչում ստացաւ. 1876-ին մտաւ կանադական պարլամէնտ, 1871—72 եղաւ առաջին մինիստր Ոնտարիո նահանգի, յետոյ տարիներում դառաւ արդարադատութեան մինիստր և մինիստրութեան խորհրդի նախագահ։

Ընտրուածների մէջ է, նոյնպէս ազատամիտ կուսակցութեան պատկանող, Հնդկաստանի մի պարս՝ Դադաբհաի Նաօրոջի, որ ուղարկուել է պարլամէնտ Լոնդոնի Ֆինսբրի քաղաքամասի կողմից, միայն երեք ձայն առաւելութեամբ իւր հակառակորդի վերայ։ Քաղաքական առանձին նշանակութիւնից սակայն զուրկ է այդ դէպքը։

Գլադստոնի կուսակցութեան ծրագրի մէջ, իրլանդական հոմռուլից յետոյ այս անգամ նշանաւոր տեղ է բռնում խմիչքեղէն վաճառելու խնդիրը, մի հանգամանք որ մեծապէս պէտք է ազդած լինի ընտրութիւնների վերայ։ Ազատամիտ կուսակցութիւնը պահանջում է որ խմիչքեղէն, այն է ալիրտ, արաղ, գարեջուր խմելու տեղերը, որպէս են հիւրանոցները, դուխանները և այլն, այսուհետև բացուեն ամեն մի վիճակում միայն այնքան թուով, որքան այդ կ'որոշի ինքը տեղական վիճակը և ոչ աւելի։ Այդ է որ կոչւում է local option։ Թէև պահպանողական կուսակցութիւնը, որքան մեզ յայտնի է, local option-ի դէմ չէ, բայց նա պահանջում է որ այժմեայ բուֆէտատէրերից նոքա, որոնք ապագայում, նոր օրէնքից յետոյ, կը մերժուեն, փողով որոշ վարձատրութիւն ստանան. ազատամիտները դէմ են այդ վարձատրութեան։

Շնորհիւ այդ խնդրում բռնած արմատական դիրքին, ազատամիտ կուսակցութեան դէմ են գործել ալիրտի, գարեջրի գործարանների ակցիոներական զօրեղ ընկերութիւնները և բուֆէտատէրերը։ Եւ արդէն Գլադստոնի կուսակցութեան մօտալուտ յաղթութեան զգացմունքը, դեռ ևս ընտրութիւններից առաջ, վայր գցեց այդ ընկերութիւնների ակցիաների արժէքը։

Բայց ահա և Գլադստոնի մինիստրութիւնը. Գլադստոն առաջին մինիստր (նախագահ մինիստրութեան) և գանձարանի առաջին լորդ (ֆինանսների մինիստր). լորդ Հերշէլ—լորդ կանցլէր-լորդ Կիմբերլէյ—պետական քարտուղար Հնդկաստանի. լորդ Ռոսբերի—մինիստր արտաքին գործերի, լորդ Ռիպոն—մինիստր կոլոնիաների, Ասկուիտ (Asquit)—մինիստր ներքին գործերի, Բաններման—պատերազմական մինիստր, կոմս լորդ Սպենսեր—առաջին լորդ ծովային կառավարութեան (ծովային մինիստր), Ջոն Մորլէյ—իրլանդական աւագ քարտուղար, լորդ Հակտոն (Hougton)—փոխարքայ Հընդկաստանի. Մունդելլա—առևտր. մինիստր, պոստը յանձնուած է՝ Արնոլդ Մորլէյին, դպրոցները՝ Ակլանդին։

Դոցանից Ասկուիտը նա է, որ Սալսբրիի մինիստրութեան դէմ դրեց անվստահութեան առաջարկութիւնը։ Նա դեռ միայն 40 տարեկան է. նա յայտնի է իբր շատ տեղեակ և տակտով մարդ, որին նոյն իսկ իւր հակառակորդները մեծ ապաստայ էին գուշակում։ Ջոն Մորլէյ յայտնի է իբրև Գլադստոնի մտերիմը և արդէն առաջ, Գլադստոնի մինիստրութեան ժամանակ, Իրլանդիայի աւագ քարտուղարն էր։ Նա յայտնի է իբր արտասովոր բարեխիղճ մարդ։ Կարևոր անձնաւորութիւն է արտաքին գործերի մինիստր լորդ Ռոզբերի, որի մասին այս կարծիքը կայ որ ընդհանուր առմամբ նա հաւանում է Սոլսբրիի արտաքին քաղաքականութիւնը և որ հետևապէս նա բարեկամ կը մնայ միջին Եւրոպայի եռապետական դաշնակցութեան։ Բայց առհասարակ Գլադստոնի մինիստրութիւնից սպասում են աւելի մեծ բարեկամութիւն դէպի Ֆրանսիան քան Սոլսբրիի ժամանակ։

Բելգիայում, որպէս անցեալ ամսուայ տեսութեան մէջ պատմեցինք, նոր ընդհանուր ընտրութիւններ եղան յատկապէս երկրի սահմանադրութիւնը վերափոխելու համար։ Բելգիայում սահմանադրութիւնը չի կարող վերափոխուել սովորական պարլամենտի վճռով ու թագաւորի համաձայնութեամբ, այլ դորա համար պէտք է որ պարլամենտը ցրուի, նոր պարլամենտ կազմուի, որի գործը պէտք է լինի միայն սահմանադրութիւնը վերաքննելը (այդ պատճառով այդպիսի ժողովը կոչւում է սահմանադրող ժողով, Chambre constituante), որից յետոյ նա պէտք է ցրուի և ապա, նոր սահ-

մանադրութեան հիման վերայ, նոր ընտրութիւններ կատարուին պատգամաւորների ժողովի համար։ Այդպէս չէ Անգլիայում, Ֆրանսիայում և այլն։ Օրինակի համար այն, ինչ այժմ մտադիր է անելու Գլադստոնի մինիստրութիւնը, ոչ թէ մի սովորական գործ է, այլ անգլիական սահմանադրութեան փոփոխութիւն է։ Սահմանադրութիւնը փոփոխող մի օրինագիծ Անգլիայում ներկայացնում է սովորական պարլամենտին, ինչպէս և ամեն մի ուրիշ օրինագիծ, մինչդեռ Բելգիայի սահմանադրութեան համաձայն՝ սահմանադրութիւնը կարող է փոխուել միմիայն յատկապէս դորա համար ընտրուած պատգամաւորների ժողովով։ Ֆրանսիայում սահմանադրութիւնը փոփոխելու համար պարլամենտի երկու ժողովները՝ պատգամաւորների ժողովը և սենատը գումարուում են միասին և կազմում միմիակ ժողով, որ կոչւում է կոնգրես, ուր ձայների առաւելութեամբ վճռւում է խնդիրը։ Հետևապէս Ֆրանսիայում յատկապէս և միմիայն սահմանադրութիւնը փոխելու համար նոր ընտրութիւններ չեն լինում և ոչ էլ սովորական օրէնքների պէս է կատարուում սահմանադրութեան փոփոխութիւնը։

Ընտրողական օրէնքը փոխելը այժմեայ սահմանադրող ժողովի առաջուց որոշած գործերից մէկն է. բայց մի բան, որ նոր է, այդ թագաւորական ռեֆերենդումն է, որի մասին Բելգիայի թագաւորը ինքն է առաջարկութիւն անում սահմանադրող ժողովին։

Ռեֆերենդումը ազգին դիմելն է։ Երբ մի որևէ շատ կարևոր խնդրի համար օրէնք է տրւում սովորական ձևով (պարլամենտի ու թագաւորի կամ առհասարակ պետութեան պետի համաձայնութեամբ), բայց օրէնք դարձնելու համար հարկ է դատում որ այդ օրէնքը ենթարկուի ազգի ընդունելութեանը կամ ոչ ընդունելութեանը, այդ նշանակում է դիմել ռեֆերենդումի։ Այդպիսի բան կայ միմիայն Շուէյցարիայում։ «Ռեֆերենդումը, ասում է Հիլտի (Hilty) իր «Ռեֆերենդումը շուէյցարական պետական իրաւունքի համաձայն» աշխատութեան մէջ, [1]) ռեֆերենդումը այն սահմանա-

[1]) Hiity.—Das Referendum im schweizerischen, Staatsrecht (Archiv für öffentliches Recht, հատոր II, էջ 167 և շարունակութիւն).

դրական կարգն է, որը պարտաւորացնում է կամ յայտնի պայման-
ներում թոյլ է տալիս որ ներկայացուցչական մարմինների (կան-
տոնների մեծ խորհուրդների կամ շէյցարական միութեան ժողովի)
վճիռները ներկայացուեն ձայնատու քաղաքացիների ընդհանրու-
թեանը՝ ընդունել կամ չընդունել տալու համար։

Ահա մի այսպիսի կարգ Բելգիայի թագաւորը ուզում է
մտցրած լինի բելգիական սահմանադրութեան մէջ, այն զանա-
զանութեամբ սակայն, որ ռեֆերենդումին դիմելու իրաւունքը
միայն թագաւորին պատկանի, և երկրորդ, որ թագաւորը ոչ թէ
պարտաւորուած լինի ռեֆերենդումին դիմելու, այլ միայն
իրաւունք լինի նրան տրուած այդ անելու, հետևապէս որ դորանից
օգուտ քաղելը ամբողջապէս իրա կամքից լինի կախուած։

Պէտք է ասած որ ռեֆերենդումի խնդիրը քննելը սահմանա-
դրող ժողովում արդէն մերժուեց նախկին պարլամենտի կողմից.
բայց այժմ ինքը թագաւորն է այդ առաջարկութեամբ դիմողը, և
պէտք է ենթադրել, որ եթէ ռեֆերենդումի խնդիրը բաւարար
լուծումն էլ ստանալու չլինի, այսուամենայնիւ նա պէտք է զբա-
ղեցնի սահմանադրող ժողովին։

Բելգիական թագաւորական ռեֆերենդումի խնդիրը ունի ոչ
միայն տեղական, այլ և ընդհանուր նշանակութիւն։ Ինչու մի թա-
գաւոր, որին իրաւունք է տրուած պարլամենտից ընդունուած մի
օրինագիծ ընդունել կամ չընդունելը, ինքն է ուզում որ նրան իրա-
ւունք տրուած լինի իւր որոշումից առաջ՝ ազգին ուղղակի դիմել
և այդ օրէնքի մասին ձայներ հաւաքել։

Ճիշդ է որ Բելգիական այժմեան առաջարկը շատ տարբեր-
ւում է շէյցարական ռեֆերենդումից. այստեղ ռեֆերենդումը
սահմանափակում է ներկայացուցչական մարմինների և երկրի բարձ-
րագոյն իշխանութիւնների իրաւունքները օրէնքներ տալու գործում,
ձայնը տալով նոյն իսկ ազգին. իսկ բելգիական առաջարկութեան
համաձայն՝ ռեֆերենդումը թագաւորի կամքիցն է կախուած դոր-
ծադրել թէ չգործադրել և կամ համակերպուել թէ չհամակերպուել
ազգի մեծամասնութեան, քանի որ այստեղ ռեֆերենդումը խոր-
հրդատու և ոչ վճռող է հանդիսանում։ Զնայած դորան, սակայն,
պարզ է որ ռեֆերենդումը բարոյապէս սահմանափակում է թագա-

ւորի իշխանութիւնը, քանի որ չօգտուել ռեֆերենդումից և կամ չը համակերպուել ռեֆերենդումին՝ վտանգներ կ՚առաջացնի թագաւորական տոհմի համար։

Կրկնում ենք՝ ինչու Բելգիայում ծագում է ռեֆերենդումի խնդիրը և թագաւորը ուզում է պաշտպանել ռեֆերենդումով։

Պէտք է կարծել որ ռեֆերենդումը պէտք է ծառայի պարլամենտարիզմի թերութիւնները ուղղելու համար։ Ճիշտ է, պարլամենտը նոյն այն ազգի ներկայացուցիչների ժողովն է, որին դիմում են ռեֆերենդումով, բայց անհերքելի է, որ պարլամենտները այնպէս ինչպէս նոքա դոյութիւն ունեն, միշտ և ամեն խնդիրներում չեն ներկայացնում ազգի մեծամասնութեան կարծիքը։ Պարլամենտները ընտրւում են սովորաբար 4 տարով. իսկ այդ ժամանակամիջոցում ծագում են այնպիսի խնդիրներ, որոնց մասին հետևապէս ազգը կարծիք չէր կարող յայտնել՝ ընտրելով սորան կամ նորան պարլամենտի անդամ։ Սովորաբար երբ դա շատ կարևոր խնդիր է՝ և կառավարութիւնը համաձայն չէ պարլամենտի վճռի հետ, կառավարութիւնը արձակում է պարլամենտը և նոր ընտրութիւններ է նշանակում։ Ցամենայն դէպս դա լինում է մի կռիւ պարլամենտի և կառավարութեան և երբեմն նոյն իսկ կառավարութեան գլուխ կանգնած պետի միջև Բելգիայում ուրեմն պարլամենտի և թագաւորի միջև. մի կռիւ, որ կարող է կարստաբեր հետևանքներ ունենալ թագաւորական տոհմի համար։

Պէտք է կարծել թէ դորա դէմն առնելու համար և իւր հեղինակութիւնը ազգի մէջ որոնելու համար է որ Բելգիայի թագաւորը դնում է սահմանադրող ժողովին իւր առաջարկը ռեֆերենդումի մասին։

«Մուրճ»-ի ընթերցողների ուշադրութիւն ենք դարձնում, որ 1890 թուականին յուլիսի 2-ին Բրիւսելում, կատարուած հակատրկական ակտը վերջապէս ներկայ 1892 թուականի ապրիլի 2-ին վերջնականապէս վաւերացուեց և միջազգային օրէնքի զօրութիւն ստացաւ սկսած ներկայ թուականի յունիսի 2-ից։ Այդ խնդիրը մենք

իւր ժամանակին շօշափել ենք նոյն այս էջերում։ Այժմ, արդէն կատարուած իրողութեան առիթով հարկ ենք համարում նորից յիշեցնել մեր ընթերցողներին մարդկայնութեան այս երևելի ակտի մասին, որ դարիս պարծանքներից մէկը կը յիշուի ապագայում։ Ցայսնի է որ մարդկանց վերայ որսալը՝ նոցա բռնելու ու վաճառելու նպատակով, հետևապէս գերեվաճառութիւնը և իրր դորա հետևանք ստրկութիւնը աշխարհքիս վերայից դեռ ամբողջապէս վերացուած չէ. հաստատ է այս ահռելի իրողութիւնը, որ ստրկութիւնը դեռ ևս գոյութիւն ունի մանաւանդ Աֆրիկայի խորքերում, ուր մարդորսութիւնը կատարուում է արաբ վաճառականների ձեռքով, էլ չխօսած այն աֆրիկական վայրենի պետութիւնների մասին, ուր ցեղապետների կամ թագաւորների համար իրանց հպատակները կամ հարևանները միայն կենդանի մսեր են։ Լուսաւոր Եւրոպային մի դար ջանք էր նստել որ իսպառ կորուի գերեվաճառութիւնը Աֆրիկայից ծովի վերայով դէպի ուրիշ աշխարհներ, բացի Աֆրիկայի արևելեան մասից, ուր դեռ ծովով գերեվաճառութիւնը կատարուում էր մինչ վերջին տարիները։ Բայց Աֆրիկայի խորքերը, ուր Եւրոպան դեռ ևս հաստատ ոտք չէր կոխել, գերեվաճառութիւնը մինչ այսօր շարունակուում է հինաւուրց անգթութեամբ և առևտրական մի ծաղկած ճիւղ է կազմում։ Այդ դրութեան վերջ է ուզում տալ Բրիւսսելի Հակա-ստրկական ակտը համերաշխ գործակցութեամբ բոլոր պետութիւնների։ Այդ մասին առաջին միջազգային խորհուրդը կամ կոնֆերենց սկսուեց 1889 թ. նոր տոմարով նոյեմբերի 18-ին Բրիւսսելում և տևեց մօտ եօթն ամիս. ապա 1890 թ. նոյեմբերին նորից կայացաւ մի ժողով կոնֆերենցի անդամների։ Ներկայացուած էին այբբենական կարգով՝ Անգլիան, Աւստրա-Ունգարիան, Բելգիան, Գերմանիան, Թուրքիան, Իտալիան, Իսպանիան, Կոնգոի պետութիւնը [1]) Հոլլանդիան, Պարսկաստանը, Պուրտուգալիան, Ռուսաստանը, Շուեդիա-Նորուեգիան,

---

[1]) Կոնգոի պետութիւնը գտնուում է Աֆրիկայում, Կոնգո հսկայական գետի ընթացքով։ Նա ստեղծուեց Եւրոպական պետութիւնների վճռով, Բերլինի կոնֆերենցիում 1885 թվին։ Այդ պետութեան պետը Բելգիայի թագաւորն է, և Կոնգոի պետութեան կենտրոնական կառավարութիւնը Բրիւսելումն է։

Ֆրանսիան, Հիւսիսային Ամերիկայի Միացած-Նահանգները—և վերջապէս Զանզիբարի սուլթանութիւնը։ [1]) Ակտը ստորագրելու համար նախ դժուարութիւններ յարուցեց Հոլլանդիան, որ կոնգոյի ակտի մի քանի որոշումները անպատշաճ էր գտնում իւր համար. բայց երկար տատանուելուց յետոյ նա, ի նկատի առնելով գործի վեհ նպատակը, ստորագրեց։ Ապա մի փոքր դժուարութիւն եղաւ Թիւրքիայի սուլթանի կողմից ակտը ստորագրել տալու, քանի որ յայտնի է, որ ստրկութիւնը Ղռանում թոյլատրուած է։ Բայց նա ևս ստորագրեց։ Բայց ամենից ուշ դժուարութիւնների հանդիպեց գործը Ֆրանսիայի կողմից, որի պատգամաւորների ժողովը 25 յունիսի 1891 թ. մերժեց ընդունել այդ ակտը մի կէտի պատճառով, վերաբերեալ նաւերի հսկողութեան, բայց արդէն միաձայն ընդունեց նոյն ակտը դեկտեմբերին 1891 իւր վերապահումն անելով նոյն կէտի մասին։ Նման խոչնդոտների հանդիպեց գործը նաև Գերմանիայում, բայց այդ բոլորը դրստուեց այնպէս, որ ներկայ 1892 թ. ապրիլի 2-ին համաձայնութեան գործը հրատարակուեց Բելգիայի պաշտօնական Moniteur belge թերթում, որ օրից 60 օր յետոյ, ուրեմն 2 յունիսի ակտը միջազգային օրէնքի զօրութիւն պիտի ստանար։

Մենք հարկ չենք տեսնում ակտը իւր ամբողջութեամբ ներկայացնել մեր ընթերցողներին, բայց աւելորդ չենք համարում նորա բովանդակութիւնը հաղորդել, աւելի կանգ առնելով կարևորագոյն կէտերի վերայ։

I. Սարուկների առևտրի երկիրները։ Միջոցներ որ պէտք է գործադրուեն այն տեղերում, ուր գերեվաճառութիւնը իւր սկիզբն է առնում։—Բրիւսսելի հակա-ստրկական գլխաւոր ակտը ցոյց է տալիս իբր ամենաազդու միջոց գերեվաճառութեան դէմ՝ լուսաւորուած ազգերի աֆրիկական կալոնիաների և նոցա հովանաւորութեան ներքոյ գտնուած երկիրների (ուր ի հարկէ գերեվաճառութիւն չկայ) բարգաւաճումը։ Կամաց կամաց յետոյ պէտք է ամուր

---

[1]) Զանզիբարը մեծ կղզի է Աֆրիկայի արևելեան ափից մի նեղուցով բաժանուած։ Մինչ այդ ժամանակ Զանզիբարը մեծ չուկայ էր Աֆրիկայի ցամաքից բերուած գերիների համար։

ու լաւ պաշտպանուած կայարաններ շինուեն այն տեղերում, ուր յանախում են գերիներ որսողները։ Երկրի մէջ գտնուած մեծ լճերը և գետերի վերին հոսանքները, որոնք ընդհատում են ջրվէժներով, պէտք է միացնել Աֆրիկայի եզրերի հետ ճանապարհներով և մանաւանդ երկաթուղիներով, օգտուելով նաև նաւագնացութիւնով, որպէս զի այժմեայ բեռներ տեղափոխելու սովորական ձևը՝ բեռնակիրների ուսերի վերայ՝ կարելի լինի վերացնել։ Նաւագնաց լճերի վերայ շոգենաւերը, ափերի վերայ շինուած ամրութիւնների հետ միասին պէտք է նոյն նպատակին ծառայեն։ Ի հարկէ որ այդքան հեռու ամրութիւնները պէտք է ծովափերի հետ հեռագրաթելերով միացնել։ Թռչող գնդեր պէտք է նոցա միջև եղած ճանապարհները ազատ պահեն։ Հրացանների և նոցա մթերքների (մունիցիոն) ներմուծումը արգելուած է, առ այժմ 12 տարով—բոլոր երկիրների համար 20 աստիճան հիւսիսային լայնութեան և 22 աստիճան հարաւային լայնութեան միջև։ [1]) Արգելուած երկիրներից հրացաններ անցկացնելը դէպի այլ տէրութիւնները կախուած է ձեռնհաս տէրութեան թոյլտուութիւնից։—Այն վերը յիշած ամրացրած կայարանները պէտք է նաև կողմնակի նպատակների ծառայեն. նոքա պէտք է ապաստարան լինեն տէրերից փախած ստրուկների համար, դատաստանատեղի լինեն, տեղացիների համար ուսումնարան լինեն—նաև երկրագործութեան և առևտրի վերաբերեալ,—լինեն յենակէտեր առևտրական ձեռնարկութիւնների և կրօնական առաքելութիւնների համար ու միաժամանակ պէտք է պահեստների տեղ լինեն առողջապահ միջոցների համար։ —Ստորագրող պետութիւնները իրար պէտք է օգնեն ստրուկների առևտրի դէմ ուղղած բոլոր ձեռնարկութիւնների մէջ։—Մինչ մի տարի պէտք է ստորագրած պետութիւնները պատժական օրէնքներ հրատարակեն գերեվաճառութեան դէմ։—Ազատուած ստրուկները, եթէ կարելի է, պէտք է իրանց հայրենիքը հասցնեն, թէ չէ՝ երկրում բնակեն։

Այնուհետև գալիս են որոշումներ հետևեալ կէտերի վերաբերեալ.

II. Քարաւանների ճանապարհները և ստրուկների տրանսպորտը ցամաքով։

---

[1]) Ընդամենը ուրեմն 42 աստիճան. մի աստիճանը հաւասար է 105 վերստի։

III. Խափանումն սորկութեան ծովի վերայ։ Միջոցը այն է որ կոսկածաւոր նաւերը կարելի լինի խուզարկել։ Այդ իրաւունքը սակայն պէտք է բանեցնուի միայն այն նաւերի նկատմամբ, որոնք 500 թոնն կամ պակաս ջուր կարող են պարունակել, որովհետև ենթադրում են թէ լուսաւորուած ազգերը ծովը ուղարկում են միայն դորանից աւելի մեծ նաւեր, որոնց նկատմամբ սորուկներ տեղափոխելու կասկած չի կարող լինել։ Բացի դորանից խուզարկելու շրջանը որոշուած է միայն Հնդկական օվկիանոսը, որ շփում է նաև Աֆրիկայի արևելեան ափը։

IV. Այն երկիրները, որոնք թոյլ են տալիս ենային սորկութիւնը։ Բրիւսելի կոնֆերէնցը չէր կարող զբաղուել նաև ենային սորկութիւնը վերացնելու խնդրով. դորա համար հարկաւոր կը լիներ որ Եւրոպան յանձն առնէր մի անողոքմ պատերազմ Ղուռանի կրօնական որոշումների դէմ և բացասէր գործակցութիւնը Պարսկաստանի և Թիւրքիայի, որոնք կարևոր դեր են կատարում աֆրիկական սորուկների արտահանման գործում։ 1890 թուականին այդ կողմից դեռ դեր էր կատարում Զանզիբարի «սուլթանութիւնը», որ այժմ արդէն այլ ևս դեր չի կատարում, քանի որ անցեալ տարուանից դէս նա ընկել է Անգլիայի գերիշխանութեան ներքոյ։ Նաև գերմանական «Արևելեան Աֆրիկայում» ենային սորկութիւնը օրէնքով ճանաչուած հաստատութիւն է։ Բայց այդ յիշեալ պետութիւնները պարտաւորուել են սորուկների ներմուծումը, միջանցումը և արտահանումը, մի խօսքով գերեվաճառը, մանաւանդ երեխաների անդամախեղութիւնը իրանց երկիրներում թոյլ չը տալ։ Ամեն մի սորուկ, որ իւր երկրի սահմանը անցնում է, ճանաչւում է որպէս ազատ։ Նկատենք նաև որ Թիւրքիայում գերեվաճառութիւնը արգելուեց սուլթանի հրամանով առ 4 դեկտեմբերի 1889 թ.։

V. Այս ակտի իրագործումը ապահովող սարք ու կարգեր։ Այստեղ գլխաւորն է մի «Միջազգային ծովային բիւրօ» հաստատումը Զանզիբարում, որ պէտք է լինի տեղեկութիւնների կենտրոնատեղ և որտեղից պէտք է հաղորդուեն ցանկացած տեղեկութիւնները։

VI. Միջոցներ՝ ոգելից խմիչքների առևտրի սահմանափակման վերաբերեալ։ Դորանով որոշում է որ 20 աստիճ. հիւսիս. լայնու-

թեան և 22 ատիճան հարաւային լայնութեան միջև գտնուած երկիրների համար կամ բոլորովին արգելել կամ դժուարացնել սպիրտային խմիչքների ներմուծումը։

VII. Վերջնական որոշումներ։ Որոնցով վճռուում է՝ վերացրած համարել այս ակտից առաջ եղած այն համաձայնութիւնները պետութիւնների մէջ, որոնք ներկայ ակտին հակառակ են. այս ակտի այլ և այլ կէտերը կարելի է ապագայում փոխել ընդհանուր համաձայնութեամբ. թոյլ է տրուում նաև ուրիշ պետութիւններին մասնակցել։

Թէ այս ակտի շնորհիւ երբ վերջին ստրուկը Աֆրիկայում ազատուած կը լինի—այդ դեռ ի հարկէ միայն ժամանակը կը տայ պատասխանը։ Բայց մի բան կ'ուզենք յիշել այս խնդրի մասին այս անգամ վերջացնելու համար։ Ներկայ դարի սկիզբներում ստրկութիւնը իրանց կոլոնիաներում վերացնելու դէմ հակառակում էին դեռ և այնպիսի կոլոնիական պետութիւններ ինչպէս Իսպանիան, Պորտուգալիան. իսկ այսօր ստրկութեան, գլխաւորապէս գերեվաճառի, վերացումը համարում է նախնական պայման ամէն մի կոլոնիական գործունէութեան։ Տեսարանը հետևապէս շատ փոխուել է։ Այդ պատճառով այդ կոլոնիզատորական գործունէութեան ամենակատաղի թշնամիները Աֆրիկայում՝ արաբական մարդորսներն են և ովքեր միայն կապուած են նոցա հետ։ Բայց որ գլխաւորն է՝ աւելի իդէալական հայեցողութիւնը այսօր յաղթանակը տարաւ ստոր շահախնդրութեան վերայ։ Խնդիրը այժմ նրանումն է որ կուլտուրան տարածելով՝ պարապ հողերը մարդկութեան օգտին ծառայացնեն և մարդավայել յարաբերութիւններով այժմ վայրենի տեղերում հասարակութիւններ ստեղծեն, և ոչ թէ աւելի ստոր գտնուած ազգերը կոպիտ ոյժով հարստահարեն։

Մեր անցեալ անգամայ յօդուածում յիշատակեցինք այն մեծ ընդունելութիւնների մասին, որոնց արժանացաւ իշխան Բիսմարկը Վիեննայում, Դրեզդէնում և Միւնխէնում։ Այդ ճանապարհորդութիւնը, որ Բիսմարկը արաւ իւր որդու ամուսնութեան առիթով, պատեհ առիթներ տուեց նրան կարծիքներ յայտնելու գերմանական

այժմեայ կառավարութեան վերայ, որով նա վերջինիս դրդեց իւր դէմ մինչ այն աստիճան, որ քիչ էր մնացել Բիսմարկը դատի կանչուէր։ Այդ բոլորը սակայն ոչ մի կերպ չը խանգարեց որ Բիսմարկը նորանոր և չը տեսնուած ծառայով ովացիաներ ընդունի այլ և այլ քաղաքներում և հրաւէրքներ ընդունի ուրիշ տեղեր ևս այցելելու։ Ցիշուած քաղաքներից յետոյ Բիսմարկը սակայն կարողացաւ ընդունել միայն Կիսինգէն և Ենա քաղաքացիների հրաւէրքը։ Մենք ի հարկէ չենք կարող այն բոլոր, անթիւ-անհամար ցոյցերի նկարագրութիւններն անել, որոնց մեծ քաղաքադէտը և հայրենասէրը առարկայ եղաւ և ոչ էլ թարգման լինել այն բոլոր ճառերի և խօսքերի, որ նա արտասանեց։ Բայց նորա խօսածներից մէկին մենք առանձին կարևորութիւն ենք տալիս. այդ այն է որ նա արտասանեց Ենայում մեծ բազմութեան առաջ։ Դա մի քաղաքական ճառ է, որ հետաքրքրական է իւր բոլոր մանրամասնութիւնների մէջ, բայց մանաւանդ ուշադրութեան արժանի է ճառի այն կտորը, որ վերաբերում է իւր կարծիքին՝ պարլամենտի նշանակութեան մասին Գերմանիայում, որի հետ նաև սերտ կապ ունի անշուշտ Բիսմարկի ապագայ գործունէութեան բնաւորութիւնը։ Այդ նշանաւոր ճառը մենք առաջ ենք բերում իւր ամբողջութեամբ, ծանօթութիւնների մէջ լուսաբանելով շատերի համար թերևս մութը պատմական կէտերը.

«Իմ լարգելի համաքաղաքացիք Թիւրինգեան երկրի! Նախ ես սրտանց շնորհակալութիւն եմ լայտնում այն սրտանց ընդունելութեան համար, որ ես գտայ Ձեզ մօտ, և ես չեմ կարող ինձ լուզող մտքերը աւելի լաւ արտայայտել, քան Ձեզ նկարագրելով իմ լարաբերութիւնները այս երկրի հետ անցած ժամանակներից։ Իբրև երեխայ ես այստեղ առաջին անգամ ծանօթացայ ժայռերի, սարերի և բուրգերի հետ իրանց պատմական վիշտակներով.— այնտեղ, Բրանդենբուրգի և Պոմերանիայի հիւսիսային տափաստանի տեսարանը բոլորովին այլ է։ Մանկական այս առաջին տպաւորութիւնները հիւսեցին իմ մէջ Թիւրինգիայի գաղափարի չուրջը ռոմանտիսմի մի նիմբուս, որ մնուցանում էր մանաւանդ վիշտղութիւններով Վարբուրգի, նորա նախկին ժամանակների, Լութերի եկեղեցական վերանորոգութեան և մեր գերմանական լեզուի զարգացման վերայ։ Լութերի Աստուածաշնչի թարգմանութիւնը առաջին սիլիզն է մեր լեզուի միութեան, որ մինչ այն ժամանակ բարբառների վրայ էր ցրուած։ Աւելի հաստատ երիտասարդութեան ժամանակ պէտք է սովորել թէ մեր ոգեկան

ու ազգային զարգացման համար ինչ նշանակութիւն է ունեցել Թիւրինգեան աշխարհը իւր Վէյմարով և Նեալով և սորա համալսարանով, ուր Շիլլերը պրոֆեսոր էր և որ երկար ժամանակ եղել է Գեոթէի ղեկավարութեան ներքոյ։ Նա անունը ինձ՝ որպէս պրուսական մի զինուորական գերդաստանի զաւակի համար ցաւեցնող և ճխլով ձայն ունէր։ [1]) Դա բնական էր, և ես հասուն տարիներում միայն կարողացայ հասկանալ թէ աստուածային Նախախնամութեան շղթայի մէջ ինչ օղակ է կազմել Նեալի ճակատամարտը մեր գերմանական հայրենիքի զարգացման համար։ Իմ սիրտը դորա վերա ուրախանալ չի կարող, խելքս սակայն ասում է ինձ՝ եթէ չլինէր Նեան, թերևս Սեդանն [2]) էլ չլինէր։ (Հաւանութիւն)։ Ֆրիդերիկեան պրուսական միապետութիւնը [3]) մեծ և իւր մէջ միացած մի ստեղծագործութիւն էր, բայց նա իւր ժամանակը ապրած պրծած էր։ Եւ ես չեմ կարծում որ եթէ Նեալի մօտ նա յաղթող լինէր՝ մենք մտած լինէինք ազգային գերմանական զարգացմար ուղիղ ճանապարհը։ Ես այդ չգիտեմ։ Բայց արդէն ժանգոտած չէնքի աւերումը—ժանգոտած, ինչպէս որ այդ ապացուցանում են այն ժամանակուայ ամենաաւագ և լարուած գիտնականների անձնատուր լինելը—ազատ տեղ բաց արաւ նոր չէնքի համար և հին պրուսական միապետութեան փչրած երկաթը ծանր և ցաւ պատճառող մուրճի ներքոյ դարձնուեց այն պողպատի, ուր 1813 թուականին օտարի լուծը զօրեղ առաձգութեամբ վեր շպրտեց։ Առանց կատարելապէս ձեռք քաշելու անցեալից՝ անկարելի կը լինէր Պրուսիայում ազգային գերմանական զգացմունքի զարթումը, որ իւր առաջին սկզբնաւորութիւնները դուր է բերել օտարի իշխանութեան խորը ամոթանքից։ Թէ ինչու այդ երկիրը պէտք է անցնէր tot discrimina rerum, այդ ես չեմ կարող Ձեզ մանրամասն պարզաբանել, առանց որ նորից մեղադրեմ ինձ պառլամենտական շատախօսութեան մէջ։ (Մեծ խնդութիւն)։ Ես ուզում եմ միայն վիշատակել որ ես 1832 թուականին մտալ համալսարան եմ։ Բուրշենշաֆտային [4]) քան կալւածատիրոջ զգացմունքներով, որ արտաքին հանգա-

---

[1]) Նեալի մօտ Նապոլէոն Առաջինը 1806 թուականին վճռողական ճակատամարտով ջարդ տուեց պրուսացիներին։

[2]) Սեդանում 1870 թուականին Նապոլէոն III մեծաքանակ զօրքով գերեւեց գերմանացիներից։

[3]) Ֆրիդրիխ II կամ Մեծը, որ Եօթնամեայ պատերազմից (1758-65) զրեթէ ամբողջ Եւրոպայի դէմ դուրս եկաւ յաղթող և Պրուսիան մտցրեց մեծ պետութիւնների շարքը։ Ֆրիդրիխ Մեծի նման հանճարեղ պետական անձն Պրուսիան և սորա հետ ամբողջ Գերմանիան ունեցել է միայն լանձին Բիսմարկի, սա որպէս քաղաքագէտ, նա դիւաւորապէս որպէս զօրավար։

[4]) Բուրշենշաֆտ որ և է «եղբայրութիւն» կազմող ուսանողութիւնն է իւր լատուկ շորով և բարք ու վարքով։ Յատուկ է միայն գերմանական ուսանողութեան։

մանքներ միայն ինձ ազատ պահեցին բուրվենչաքաղաքին գործունէութեան մէջ խրտելուց։ Մարկեան (պոմերանեան) աւազակին հողին էլ այն ժամանակ այնքան օտար չէր գերմանական ազգայնութեան զգացմունքը, որ մի որքան և իցէ կենդանի ոգի իւր մտքով զգար և գործէր։

Այդ զգացմունքի զարգացման մէջ ես լայնի չափով խանգարուեցի 1848 թուականի անցքերով։ Բերլինի փողոցներում մղած կռիւը մեր իսկ երկրացիների դէմ, այն գոլների դէմ, որ ես հպարտութեամբ կրում էի որպէս սպայ, լեռադարձ դառն հարուած ուեց իմ զգացմունքին, որ ես իմ մէջ դեռ ամբողջապէս չէի մեռցրել։ Երբ մենք առաջին անգամ Էրֆուրտի պարլամենտում հաւաքեցինք, այնտեղ ես առաջին անգամ երկար ժամանակով նորից տեսայ Թիւրինգենը, եթէ չհաշուելու լինենք այն կարճ մնալս Կնալում, որ աւելի կարճացնելու հարկաւորութիւն ունեցաւ այն ժամանակուայ մեռաւոր (Խնդութիւն)։ Գերմանական միութեան պատը դեռ ես հասուն չէր Էրֆուրտում։ Քանի որ մենք ապրում էինք Աւստրիայի հետ դուալիզմի մէջ, այդ դուալիզմի զարգացումը շատ շատ կարող էր Գերմանիայի Հիւսիսին և Հարաւին իրարից բաժանելուն հասցնել։ Երգի վերջը եկած կը լինէր, եթէ դուալիզմի հանգոյցը սրով չը լուծէր։ Ես վիշտնում եմ այդ պնդելու համար, որ այն ներքին պատերազմը, որ մենք 1866 թուականին վարեցինք, միանգամայն անխուսափելի էր։ Մենք պէտք է գերմանական ձեւով ու դիտաւորութիւնով իրար հետ ծեծէինք մեզ ատուածային դատաստանին յանձնելով, իմանալու համար թէ որ կողմը կը լինի ֆիւռը բարձրագոյն իշխանութեան նկատմամբ։ [1]։ Այդ

---

[1]) Գերմանական անկախ պետութիւնների թիւը 25-ից անց էր։ դոցա մէջ երկուսը մեծ պետութիւններ էին՝ Աւստրիան և Պրուսիան։ Բոլորի մէջ մի ընդհանուր քաղաքական կապ ստեղծելը մի իդէալ էր, որին ձգտում էին բոլոր հայրենասէրները։ Էրֆուրտի, ապա Ֆրանկֆուրտի պարլամենտները, որ ընդհանուր գերմանական էին, ծնունդ էին այդ ձգտումների։ Այդ ընդհանուր գերմանական խորհուրդներում գլխաւոր ազդեցութիւն ունենալու խնդիրը երկպառակտում էր Աւստրիայի և Պրուսիայի և կուսակցութիւնների բաժանում մեր պետութիւններին։ Այդ անվերջանալի հակառակութիւններին և երկպառակտումներին վերջ տուեց 1866 թուականին Պրուսիայի և Աւստրիայի իրար հետ մղած մեծ պատերազմով, որի վճռողական ճակատամարտը եղաւ աւստրիական կեսնիգրեց քաղաքի մօտ և ուր վերջացաւ պատերազմը օգուտ Պրուսիայի։ Բիսմարկը այդ ժամանակ Պրուսիայի արտաքին գործերի մինիստրն էր։ Պրուսիան իւր այդ յաղթութիւնից օգտուեց մի նոր միջազգային կազմակերպութիւն ստեղծելով գերմանական պետութիւնների համար։ Աւստրիան դուրս գցուեց ընդհանուր գերմանական խորհրդից, իսկ մնացած բոլոր գերմանական պետութիւնները Պրուսիայի հետ և սորա գլխաւորութեամբ կազմեցին «Հիւսիսային գերմանական միութիւն» անունով մի դաշնակցական պետութիւն ընդհանուր պարլամենտով (ռայխստակ) Բերլինում և մի-

կատարեց, և կատարեց չափաւորութեամբ, ինչպէս վայել է հայրենակից-ներին։ Մեր այն ժամանակուայ հակառակորդի մէջ մենք չթողինք անհաշ-տելի տրամադրութիւն։ Մեզ յաջողուեց Աւստրիայի հետ նոյնպիսի յարա-բերութիւնների մէջ մտնել, ինչպէս որ Ֆրանկֆուրտի սահմանադրական ծրագիրներ կազմողները ձգտում էին առանց իրագործել կարողանալու։ Պէտք է ուրեմն բարի Աստուծուն ժամանակ թողնել որ Նա իւր գերմա-նական ազգը անապատի միջով անցկացնի և սպասել որ հասցնի աւե-տեաց աշխարհը, որի մէջ ենք մեզ կարծում արդէն (Խնդութիւն)։ Բացի աւստրիականից, մենք անհրաժեշտօրէն պէտք է վարէինք նաև ֆրան-սիական պատերազմը, որովհետև մեր նոր հիմնարկութիւնների համար մենք կարօտ էինք ոչ միայն Աւստրիայի այլ և եւրոպական սենիորների կոնսենտի համաձայնութեանը։ Այդ պատճառով մենք կարիք ունէինք որ Ֆրանսիայի հետ պատերազմը առանձնապէս կարողանայինք վարել։ Ամ-բողջ Եւրոպայի մի կոալիցիայի դէմ, մի կոալիցիայի, որպիսին Եօթն-ամեայ պատերազմի ժամանակ եղաւ, մեր գործը շատ աւելի դժուար և անա-յողջ կը լինէր։ Գերմանական ազգի աստուածային առաջնորդութեանն է պատկանում, դէպի որը ես նաև ապագայի համար հաւատ ունեմ, որ այն-պիսի քաղաքական պատահարներ, որ ոչ ոք չէր կարող նախատեսել, Ռուսաստանի և Աւստրիայի մէջ ունեցած կապը կործանեցին և այն էլ այնպէս, որ Օլմիւցեան կապակցութեան բաժանումից մեր ազգային քա-ղաքական նպատակների համար օգուտ կարողացանք։ Եթէ 1866-ին Աւստրիան և Ռուսաստանը նոյն միութեամբ մեզ դէմ կանգնած լինէին, ինչպէս Օլմիւցի օրերին—միայն Աստուած գիտէ թէ արդեօք մեր յաջողու-թիւնը նոյնը կը լինէր և թէ մենք նոյն աստիճանի վերայ կանգնած լի-նէինք։ Ֆրանսիայի դէմ կռուի մէջ, որ խօսք պէտք է վարէինք, ինչպէս որ ամեն գարում երկու կամ երեք անգամ պատահել է, մենք աւելի թոյլ կանգնած կը լինէինք և թերևս բաղդաւոր չլինէինք։

ութիւն կազմող պետութիւնների ներկայացուցիչների մի ժողովով նա-խագահութեամբ Պրուսիայի թագաւորի կամ սորա ներկայացուցչի։ Այդ «Հիւսիսային գերմանական միութիւնն» էր, որ 1870-71 թուականին պա-տերազմ մղեց Ֆրանսիայի դէմ և յաղթեց նորան։ Դեռևս պատերազմը չվերջացած, 18 յունուարի 1871 թուականի համաձայնութեամբ միութիւնը կազմող բոլոր պետութիւնների այդ միութիւնը հռչակեց «կայսերու-թիւն» և կայսեր տիտղոսը տրուեց Պրուսիայի թագաւորին։ Այդ ամենում գլխաւոր գործիչը մինիստր Բիսմարկն էր։ Կայսերութեան սահմանադրու-թեան գլխաւոր հիմքը կազմեց նախկին «Հիւս. Գերմ. Միութեան» սահ-մանադրութիւնը, բայց նորա մանրամասնութիւնների մէջ մտնելը այժմ տեղը չէ։ Այդ գործը գլուխ բերելուց յետոյ Բիսմարկը յաջողացրեց 1879 թուականին Գերմանիայի սերտ և դաշնագրով ամրապնդած բարեկամու-թիւնը Աւստրիա-Ունգարիայի հետ։ Ζ.

Այդ պատերազմները անհրաժեշտ էին. բայց մի անգամ որ նոքա վարեցին, այլ ևս ես հարկ չեմ տեսնում նոր պատերազմներ վարելու։ Մենք նոցա մէջ որոնելու այլ ևս բան չունենք։ Ես դատարկ կամ անճարպիկ բան եմ համարում, եթէ մենք նոր պատերազմներ մղելու դրութեան մէջ մեզ դնենք, առանց տիպուած լինելու օտարների ցարձակումներից։ Այն ժամանակ ի հարկէ մենք այնքան ուժեղ կը լինենք, որքան Գերմանիան է Եւրոպայի մէջ տեղում։ Այդ նշանակում է թէ իւր հարևաններին հասուն լինել, եթէ նոքա միանան անգամ, բայց միայն պաշտպանողական դիրքում։ Ցարձակողական կաբինետային պատերազմներ մենք չենք կարող վարել։ Ամեն մի ազգ, որ կաբինետային պատերազմ վարելու հարկի մէջ է դնում իրան, իսկական սահմանադրութիւն չունի։ Մի պատերազմ, նոյն իսկ յաղթանակը, բարերար հետևանքներ չունի մի ազգի համար։ 1870-ից մենք աշխատել ենք պատերազմներից խուս տալ, և ամենից առաջ նոր գերմանական կայսրութեան համար խաղաղութիւն պահպանել, որովհետև նորա ներքին շինքաը մեր գործունէութիւնը ամբողջապէս կլանում էր, այն, մինչև անգամ պահանջում էր մի տեսակ դիքտատորական գործունէութիւն, որ ես իբրև մի մեծ պետութեան մշտական հաստատութիւն չեմ ցանկանում։

Մենք մեր ամբողջ ուշադրութիւնը դարձրինք պետութեան հիմնարկութիւնների հաստատման վերայ, այն մտքով որ բոլոր գերմանացիք այդ հիմնարկութիւնները սիրէին, որպէս մի սեպհականութիւն, որ պաշտպանելու համար նոքա բոլորը պատրաստ կը լինէին (Ոգևորած հաւանութիւն)։ Թերևս գործը դեռ ևս պատրաստ չէ։ Բայց նա կարող է պատրաստ լինել, եթէ մենք ունենանք մի ուժեղ պարլամենտ, որպէս վառող կէտ ազգային միութեան զգացմունքի (Հաւանութիւն)։ Մի պարլամենտ չի կարող ուժեղ լինել, եթէ նա կուսակցութիւններով պատռուած է։ Այն ժամանակ ամեն մէկի ձեռքում կը լինի՝ եղած ֆրակցիաները և ստորաֆրակցիաները իւր համոզմունքի և ձայնատուութեան համար շահեցնել, և մի դժբաղդութիւն է, եթէ մենք ֆրակցիաների մրցումների և կուսակցութիւնների—do ut des սենդենցիայի—մէջ ընկնենք։ Առանց մի ռալխստաղի, որ չնորհիւ իւր գոգում ունեցած մի մշտական մեծամասնութեան կարողանայ ժողովրդական ներկայացուցչութեան պարտքը այնպէս կատարել, որ նա կառավարութեան քննադատէ, վերահսկէ, զգուշացնէ, նայած հանգամանքներին նաև առաջնորդէ, մի ռալխստաղ, որ կարողանայ այն հաւասարակշռութիւնը իրագործել, որ մեր սահմանադրութիւնը ուղեցել է ստեղծել կառավարութեան և ժողովուրդի ներկայացուցիչների մէջ։ Առանց այդպիսի մի ռալխստաղի ես հոգսի մէջ եմ մեր ազգային հիմնարկութիւնների տևողականութեան և հաստատութեան նկատմամբ (Ոգևորած հաւանութիւն)։ Այժմեայ օրս մենք չենք կարող մի զուտ դինաստիական քաղաքականութեան նվիրել մենք պէտք է ազգային քա-

զաքականութիւն ունենանք, եթէ ուզում ենք գոյութիւն ունենալ։ Այդ բանը հետևանք է այն քաղաքական զարգացման, որ այս վերջին կէս դարում Եվրոպայում կատարուել է։ Բայց որպէս զի ազգային քաղաքականութիւն անենք, մենք պէտք մի ազգային ներկայացուցչութիւն ունենանք, որի գործը ամենից առաջ պէտք է լինի ազգի կարիքները և ցանկութիւնները ի նկատի ունենալ։ Մենք չենք կարող կառավարել գոյութիւն ունեցող ֆրակցիաներից որ և է մէկի ղեկավարութեամբ, իսկ ամենից քիչ՝ Կենտրոնի [1]) ղեկավարութեամբ (Ոգևորած հաւանութիւն)։ Ես կարծում եմ, որ կաթոլիկական խնդիրներում մենք կարող ենք աւելի հեշտութեամբ գործը տանել, եթէ հռոմայական կուրիայի հետ բանակցենք մի նունցիուսի [2]) միջնորդութեամբ Բերլինում, քան եթէ նունցիուսի տեղը բռնի պապի ազդեցութիւնը Կենտրոնի միջոցով»։

Այս վերջինը ես գանում եմ աւելի վտանգաւոր մեր ազգային նպատակների համար, քան ինչ կարող էր լինել մի նունցիուս։ Դրանով ես չեմ ուզում բարեխօսել որ մի նունցիուս կոչի մեզ մօտ. ես այս խօսքերը ասում եմ միայն իբր արտայայտութիւն մի դատողութեան, որ ես շրջում եմ հետս Կենտրոնի այժմեայ ղեկավարութեան պատճառով։ Ես այդ Կենտրոնը վտանգաւոր եմ համարում, ոչ միայն դաւանական խնդիրներում, այլ գլխաւորապէս ազգային խնդիրներում։ Նա քանդում է այն ամենը, ինչ որ մենք մեր արևելեան սահմանների մօտ Լեհաստանում գերմանական բան ենք շինել։ Ամբողջ կուլտուրկամպֆը աւելորդ կը լինէր, եթէ դորանից կախ ընկած չը լինէր լեհական խնդիրը։ Բայց նա կախած էր նրանից։ Այն ժամանակ այսպէս կոչած կաթոլիկական բաժանմունքի խնդրում նունցիուսը մի օտար դիպլոմատ չէր, այլ նա պրուսական մինիստրութեան միջումն էր,—մի բաժանմունք, որ սկզբում հիմնուած էր թագաւորի իրաւունքները պաշտպանելու համար եկեղեցու դէմ, բայց որ այն տեղը հասաւ, որ իրապէս պաշտպանում էր եկեղեցու և լեհացիների իրաւունքները թագաւորի դիմաց։ Դա անցեալի մի տեսութիւն է։ Զեղնից ոմանք պատմութիւն են ուսանելու. ես չէի կարող այս չը լուսաբանած թողնել։ Բայց մի բան կարող էինք սովորել Կենտրոնից,—դա կարգապահութիւնն է և բոլոր կողմնակի և կուսակցական նպատակների զոհաբերումը մի մեծ նպատակին։ Դուք տեսնում էք Կենտրոնում (կաթոլիկ կուսակցութեան) ամենահեռաւոր քաղաքական տարբեր միացած։ Իմ վիշողութեամբ՝ բոլոր ժամանակներում նորա մէջ կային միանգամայն ռէակցիոնէր (լեռագնաց)

---

[1]) Կենտրոնի կուսակցութիւնը Գերմանիայում կոչում է կաթոլիկ պապական կուսակցութիւնը, որի գլուխն էր մինչ 1891 թուականը Լուդվիգ Վինդհորստ։ Վերջինիս մասին տես մեր լօդուածը «Մուրճ» 1891 թ. № 4։
Z.

[2]) Նունցիուս նշանակում է Հռոմի պապի դեսպան։

ազնուականներ, միահեծանները (աբսոլուտիստ), պահպանողականներ և մինչև անգամ ազատամիտներ (ֆրէյզինիդ), մինչև իսկ սոցիալ-դեմոկրատներ, և նոքա բոլորը իրր մի մարդ ձայն են տալիս այն բաների մասին երբ նոցա խելքը ասում է թէ եկեղեցու շահերը այդ պահանջում են. Դէհ չենք կարող մենք ևս, քանի որ մենք մի ազգային եկեղեցի չունենք, կուսակցութիւններից վեր մի այդպիսի գերիշխող համոզմունքից պինդ բռնել, այն է վճռած լինել այն ամենի օգտին ձայն տալ, ինչ պահանջում է մեր ազգային հաստատութիւնը և ապահովութիւնը, և այն ամենի դէմ լինել, ինչ այն թաղում է և խանգարում. Եւ պարզ չէ որ ֆրակցիաների զանազանութիւն չը պէտք է լինի այն ֆրակցիաների մէջ, որոնք առհասարակ գերմանական պետութեանը օգնել և նրան պահպանել են ուզում— և ամենեին բոլորը չեն այդպէս,—այլ որ նոքա պէտք է մի կարտէլ (միութիւն) կազմեն. Մենք ուզում ենք հայրենիքի շահերը շատ վեր դասել և ամեն մի խնդիր այդ տեսակէտի ներքոյ դնել, ինչպէս որ Կենտրոնն է ամեն ինչ հռոմայական—կաթոլիկական տեսակէտից քննում [1]. Կենտրոնից կարելի է սպասել ամենամեծ հակառութիւն և ամենամեծ անհետևողականութիւն. Բայց հէնց որ այն ձեռնհաս աւտորիտէտը լայնում է թէ այդ են պահանջում եկեղեցական շահերը, էլ նոքա մի ակնթարթ չեն տատանւում—la udabiliter sese objiciunt. Ինչու մենք չը պէտք է նման բանին հասնենք ազգային ասպարէզի վերայ, ինչու չը պէտք է մենք մեր ազգային համոզմունքներին նոյն եռանդով և բացառապէս ծառայենք, ինչպէս որ Կենտրոնի անդամները սկսած Լիբէրից և Հիցէ'ից մինչև պարոն ֆոն Շորլեմերը (ծիծաղ), որոնք ամենքը մի սանրի վերայ են բուրդ խուզում. Այդ բանը նոյն չափով ապասելի չէ մեր բարեկամներից նոցանից, որոնք անկախ են ուզում մնալ, բայց այդ միշտ պէտք է աչքի առաջ ունենալ. Թշնամուց պէտք է սովորել և ես որպէս առաջ, նոյնպէս և այժմ համարում եմ Կենտրոնը գերմանական պետութեան թշնամի իւր հակումներով (տենդենց) և ոչ լանձին նորա բոլոր անդամների. Եթէ գերմանացիք նոցա մէջ կան անազին թիւով, բայց առաջնորդող ուղղութիւնը (տենդենցը) այնպէս է, որ ես դժբախտութիւն և վտանգ եմ համարում պետութեան համար, երբ կառավարութիւնը իւր զեկավար խորհրդատուները վերցնում

---

[1]) Մեր ընթերցողներին աւելորդ չէ ասելը, որ այնքան մեծ ուշադրութիւն որ նէրբում է Բիսմարկը Կենտրոնին, այնքան հռոմայական-կաթոլիկ կուսակցութեան, նրանով է բացատրւում, որ գերմանական ռէյխստագում եղած բոլոր կուսակցութիւններից, առանձին-առանձին վերցրած, Կենտրոնի կուսակցութիւնը թիւով և դիսցիպլինով ամենից ուժեղն է. մինչդեռ Կենտրոնին հակառակ կուսակցութիւնները բաժանուած են և իրար հալածում են. Բիսմարկի լաչորդ պետական կանցլէր կոմս Կապրիւին զգալապէս զանւում է Կենտրոնի ազդեցութեան ներքոյ. Հ.

է Կենտրոնից և երբ իւր ուղղութիւնը սրում է գլխաւորապէս այն կողմը, որ Կենտրոնին դուրեկան լինի։ Կենտրոնը տեղական լենարան չի կարող լինել։ Ես ուզում եմ հաշտ ապրել իմ կաթոլիկ համաքաղաքացիների հետ, բայց ես չեմ ուզում նոցա ղեկավարութեան տակ մնալ։ (Բուռն հաւանութիւն)։ Ես երդվել եմ մի աւետարանական կայսերութեան մի աշխարհական ղեկավարութեանը (Ich bin eingeschworen auf eine weltliche Leitung eines evangelischen Kaiserthums) և դորան ես հաւատարմութեամբ կապած եմ. և եթէ ինձ, երբ ամեն անգամ որ իմ 50-ամեայ փորձառութիւնից և քաղաքականութիւնից վեռոլ, կարծիք եմ լսում թէ իմ թագաւորի խորհրդատուները աւելի լաւ կանեն եթէ ուրիշ շաւղով ընթանան, լանդիմանում են թէ ես հակամոնարխիական քաղաքականութիւն եմ անում, այն ժամանակ ես դէհ վերջապէս ձեր ուշադրութիւնն եմ դարձնում մեր ներկայ սահմանադրութեան վերայ, որի համաձայնութեան բոլոր կառավարչական կարգադրութիւնների համար պատասխանատուութիւնն ընկնում է ոչ թէ միապետի վերայ, այլ պետական կանցլերի և մինիստրների վերայ։ Բացի դորանից ես ձեր ուշադրութիւնն եմ դարձնում այն բանի վերայ, որ այդ հաւատացքը—ես չեմ ուզում ասել մի հին գերմանական է—բայց մեր մարմնի ու արիւնի մէջ հաստատած է դեռ շատ աւելի առաջ, քան երբ մենք սահմանադրութիւններ ունէինք։ Ես ուզում եմ ձեր մտքին բերել միայն մի օրինակ այն մեծ ոգու գրածներից, որի շնորհքները (Manen) այստեղ, այս վայրում, մեզ շրջապատում են [1]։ Գեոթէն իւր Գեոց ֆոն Բերլիխինգէն դրամայի մէջ ներկայացնում է մեզ կայսեր հաւատարիմ մի ասպետ, որ իւր կայսրի համար ամենքան լարգանք և հաւատարմութիւն ունի, որ մի կայսերական խորհրդատուին ապառնաց այս խօսքերով Ախ, թէ որ միայն դու կրում չը լինես կայսեր պատկերը, որին ես նոյն իսկ լեռնից (Konterfei) պաշտում եմ! Այդ ասպետը, որի անձնատուր լինելն էր պահանջում այդ կայսերական խորհրդատուն, սկի փիքր չարաւ ու պատուհանի բարձրութիւնից նորա դէմ սուր քննադատութիւն չպրտեց (Մեծ ծիծաղ)։ Դա ցոյց է տալիս որ Գեոց ֆոն Բերլիխինգէնը և Գեոթէն երկու բաները իրար հետ չեն խառնել և չեն նոյնացրել։ Կարելի է հաւատարիմ կողմնակից լինել տոհմին, թագաւորին ու կայսրին, առանց—ինչպէս Գեոց'ում ասած է՝ նորա կոմիսարների իմաստութեան մասն համոզած լինելու։ Ես այս վերջինից չեմ և այդ իմ համոզմունքը ես լեռ չեմ պահելու։ (Բուռն հաւանութիւն և ոգևորած դոչումներ իշխանին)։

Բիսմարկի այս ճառը, որ իւր պատմական քաղաքական հաստատ հիմունքով և իւր ամբողջութեամբ յիշեցնում է մեզ իշխանի նշանաւոր ճառերը պարլամենտում՝ պետական կանցլեր եղած ժա-

---

[1]) Գեոթէի անունը սերտ կապած է Նեալի և Վէյմարի հետ։ Z.

մանակ, առաջին մեծ քաղաքական խօսքն է որ նա արտասանել է իւր պաշտօններից հեռացրած օրից 1890 թ. մարտի ամսից։ Այս ճառը ցոյց է տալիս, որ Բիսմարկը անընկրկայ կերպով զբաղուած է նախագծով այն ազգային մեծ գործը, որ նա մեծամեծ դժուարութիւնների մէջ յաջողութեամբ սկսել է ստեղծել իբր մինիստր և կանցնէր, այժմեանից արդէն պետութեան պարլամենտի միջոցով է ուզում առաջ տանել։ Պէտք է ասած որ իւր երկարամեայ պաշտօնական դիրքում Բիսմարկը իւր դիքտատորութեան հասնող իշխանութիւնը շարունակ պարլամէնտի հետ կռիւ տալով էր պաշտպանում։ Իսկ այժմ իւր յոյսերը նա պարլամէնտի վերայ է դնում։ Բոլոր այն երկիրների թերթերը, որոնք գերմանական նոր պետութեան ստեղծելովը և Բիսմարկի քաղաքականութիւնովը իրանց զգում են նեղացած դրութեան մէջ—ամենից առաջ աշխատեցին չարախնդաց կերպով մատնանիշ լինել Բիսմարկի այս առերևոյթ հակասական վարմունքի վերայ. բայց այդ մոքով աւելին արին Բիսմարկի թշնամի գերմանացի թերթերը, որոնց անձնական հաշիւներին անտեղեակները միամտաբար աշխատեցին արձագանք լինել նաև այլ երկիրներում։ Բայց արժէ միայն ցանկութիւն ունենալ ըմբռնել քաղաքական էվոլիւցիական երևոյթները, և մենք կ'անէինք այսպիսի դատողութիւն. Բիսմարկը որպէս գլխաւոր աշխատակից գերմանական նոր պետութիւնը ստեղծելու գործում, որպէս այդ պետութեան գաղափարի ամենահեղինակաւոր և միևնոյն ժամանակ ամբողջ աշխարհից վկայած ամենակարող ներկայացուցիչը, աշխատում էր մինիստր և կանցնէր եղած ժամանակ, որքան որ տևեց հաւատը դէպի նա իւր մենարքների կողմից, ամրապնդել նորահաստատ պետութեան հիմունքները այն եղանակով, որ պարտիկուլարիստական ձգտումները և այլ հանգամանքները չկարողանան ծաւալ ստանալ և հաստատուած միութիւնը խախտել։ Բիսմարկը, տեսնելով իւր այդ նախագծած և անհրաժեշտ ծրագրի դէմ այլ և այլ խոչնդոտներ գերմանական պարլամէնտում, վախենալով որ իւր հակառակորդների ձեռքում ամբողջ գործը կարող է թերի մնալ և խորտակուել, մարտնչում էր պարլամէնտի այլ և այլ նոյն իսկ իրար հակառակ կուսակցութիւններից կազմուող մեծամասնութիւնների դէմ։ Այդ անելով նա ոտնակոխ չէր անում սահմանա-

դրութիւնը, այլ հէնց ինքը օգտուում էր սահմանադրութիւնից տուած իրաւունքներից, և երբ իւր խօսքը չէր աղդում իւր համար մեծամասնութիւն գոյացնելու համար՝ նա դիմում էր ծայրահեղ բայց և սահմանադրական միջոցին, – նա արձակել էր տալիս պարլամէնտը, դիմելով ազգին նոր ընտրութիւններ անելու համար։ Եթէ ազգը միշտ աւելի ձայն էր տալիս յօդուտ Բիսմարկի նախագիծներին, ինչով էր այդտեղ մեղաւոր Բիսմարկը։ Եւ եթէ այսքան տարիների ընթացքում գերմանական պարլամէնտում չը կարողացաւ կազմուել մի կոմպակտ և տեւողական մեծամասնութիւն ընդդէմ Բիսմարկի ժամանակուայ կառավարութեան և որը կարողանար սորան դէմ դնել մի այլ, ազգի մեծամասնութեան հաւանութիւնը զուած ծրագիր, միթէ միայն Բիսմարկն էր որ պէտք է յարգէր գոյութիւն ունեցող կուսակցութիւնները և գլուխ խոնարհէր նոցա առաջ, և այդ անէր այն մարդը, որի իւր ազգին ու հայրենիքին մատուցած ծառայութիւնները իսկի չի կարելի համեմատել անդամ որ և է ժամանակակից մարդու իւր ազգին ու հայրենիքին մատուցած ծառայութիւնների հետ, այն աստիճան Բիսմարկինը անհամեմատելի գերազանցութիւն ունեն։ Բիսմարկի վարած կռիւները պարլամէնտի մեծամասնութիւնների դէմ մի անձնապաստան մարդու կամակորութիւնից չէր, այլ այն մեծ վստահութիւնից, որ ունէր նա դէպի գերմանական ազգը։ Զը լինէր այդ հանգամանքը, կայսր Վիլհելմ I չէր պնդիլ նորա մինիստր մնալու վերայ, թէ չէ նա իւր դէմ կը ունենար ամբողջ ազգը։ Մի խօսքով քանի որ պետութեան ղեկավարը Բիսմարկն էր, երկրի քաղաքականութեան նժարի ծանրութիւնը ոչ թէ պարլամէնտի այլ Բիսմարկի կողմն էր, լոկ այն պատճառով որ հասարակաց կարծիքում Բիսմարկի անձնաւորութիւնը անհամեմատ մեծ կշիռ ունէր, իսկ այդ կշիռը ունենալու պատիւը նա վաստակել է ազգին մատուցած գերազանց ծառայութիւններով։ Լինէր նոյն մարդը պարլամէնտի անդամ, հաւանական է որ պարլամէնտը աւելի մեծ նշանակութիւն ունենար։ Գործին ծառայած լինելով մինիստր եղած ժամանակ՝ նա նոյն գործին կը ծառայի նաև իբրև պարլամէնտի անդամ։ երէկ նա գործը ազատելու համար կռւում էր պարլամէնտի կուսակցութիւնների դէմ, որոնք իրան հակառակ էին, այսօր նա նոյն գործի համար կռւում է կառավարութեան դէմ, որ իւր

կարծիքով լաւ չէ վարում պետական գործերը, և վտանգաւոր է համարում մանաւանդ կաթոլիկ կուսակցութեան հաճոյանալը կառավարութեան կողմից։ Միւս կողմից այն պարլամէնտի դէմ, որի դէմ երէկ էր կռուում, Բիսմարկը կռուում է նաև այսօր, քանի որ նա համոզուած է որ այժմեայ կուսակցութիւններից մի զօրեղ յառաջատար մեծամասնութիւն կազմել անհնարին է, և այդպիսին մէկը իսկի չկայ էլ։ Եւ, որպէս պէտք է ենթադրել, նկայում խօսած ճառով, որ ամբողջապէս առաջ բերել մենք հարկ համարեցինք, Բիսմարկը ակնարկում է իւր մտադրութեան վերայ՝ յեղաշրջում կատարել Գերմանիայի քաղաքական կուսակցական կեանքի մէջ, գլուխ կանգնելով մի կուսակցութեան, որի նմանը նա զուր էր որոնում իւր կանցլէր եղած ժամանակ։ Եւ թէև չի կարելի հաւատալ կերպով ասել թէ Բիսմարկին իւր այդ նոր ձեռնարկութիւնը լիովին կը յաջողուի, բայց միայն հիանալ պէտք է թէ ինչպէս այնքան տարիներ գրեթէ դիքտատորական իշխանութիւն բանեցրած հռչակաւոր մարդը իւր խորը ծերութեան հասակում այնքան սրտին մօտ է առնում իւր հայրենիքի ճակատագիրը, որ իւր ազգին մի մեծ ազգային պետութիւն ստեղծելուց յետոյ՝ այսօր նա այդ պետութեան մէջ ներքին քաղաքական նոր կեանք ստեղծելու փշերով լի գործին է ձեռնարկում։ Կարելի է Բիսմարկի ամեն մի քայլին հաւանութիւն չը տալ, թէ իւր անցեալում և թէ ներկայում. հակակրել անգամ նորա ձգտումներից մանաւանդ այն որ լեհացիներին է վերաբերում, որի առիթով իւր «Առանց դաւանանքի» վէպի մէջ (տես «Մուրճ»-ի ներկայ համարը) դառն ծիծաղով գանգատուում է Սենկևիչը. բայց այնքան ճահճային է գերմանական քաղաքական կեանքը, որ միայն ուրախանալ պէտք է, եթէ Բիսմարկին յաջողի կերպարանափոխել և քաղաքական հզօրութեան հասցնել կուսակցական կեանքը Գերմանիայում։ Դորանով նա կը հիւսի մի նոր պսակ իւր փառքով փայլող ճակատը նոր զարդով պսակելու համար։

Եւրոպայի միջազգային բարձր քաղաքականութեան վերաբերեալ այս ամիսներս մի քանի նոր գծեր սկսեցին պարզուել։ Իբր թէ պապ Լէօ XIII գործօն դեր է կատարել և շարունակում է

գործել Ֆրանսիայի և Ռուսիայի բարեկամութեան գործում։ Խընդիրը սակայն պարզուած չէ։ Միայն թէ պապի բռնած որոշ բարեկամական դիրքը դէպի Ֆրանսիական հանրապետութիւնը, որի մասին մենք մեր անցեալ տեսութիւնների մէջ արդէն քանիցս խօսել ենք, հաւանական է դարձնում որ պապը իւրովանը աշխատած լինի միջին Եւրոպայի եռապետական դաշնակցութեան դէմ, որի անդամներից է իւր թշնամի Իտալիան, Ֆրանսիային ծառայել։

Յիշատակելու արժանի է նաև Պարիզի յայտնի Figaro լրագրի մի յօդուածը Alliance ou flirt խորագրով, որտեղ առաջարկւում է Ֆրանսիայի և Ռուսիայի մէջ գրաւոր դաշնակցութիւն։ Այժմ արդէն հաստատ է որ նոցա մէջ գրաւոր պայման չկայ և դատելով ռուսաց մայրաքաղաքային լրագիրների կծու պատասխաններից «Ֆիգարօ» յօդուածին, պէտք է ընդունել որ այդպիսի պարտաւորիչ պայմանի մասին դէթ մօտիկ ապագայում խօսք չի կարող լինել։

Բաւականում ենք միայն յիշատակելով, որ Բոլգարիայի յայտնի առաջին մինիստր Ստամբուլով ներկայ օգոստոսին ընդունեց Կ. Պոլսում սուլթանի կողմից։ Անկասկած է որ դա քաղաքական հեռանկներ է ունենալու Բոլգարիայի համար։ Այդ դէպքը ընդունեց որպէս ցոյց Ռուսիայի դէմ։

Z.